

«ՀԱՅԿԱԶՅԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», խմբագիր Երվանդ Հ. Քասունի,
Պեյրուսթ, 1970, 236 էջ, 1971, 330 էջ:

Բեյրութի Հայկազյան կոլեճի հայագիտական ամբիոնի նախաձեռնությամբ, 1970 թ. հիմնվեց հայագիտական տարեգիրք՝ «Հայկազյան հայագիտական հանդեսը», որը կոչված է նպաստելու հայագիտության զարգացմանը: Արդեն լույս են տեսել «Հայկազյանի» երկու գրքերը՝ հայ ժողովրդի պատմության, արվեստի ու գրականության ամենատարբեր բնագավառների ու դարաշրջանների լայն ընդգրկումով:

Տարեգիրքը բացվում է «Որպես մուտք» հակիրճ խմբագրականով, որտեղ շարադրված են նոր հրատարակության նպատակն ու ըսկզբունքը. «Հայկազյան հայագիտական հանդեսի» էջերը բաց կը մնան բոլոր անոնց, որոնք գիտեն գիտական հիմքերու վրա նետված և առակայորեն ներկայացված խոսքին արժեքը» (էջ 7): Խմբագրությունը հույս է հայտնում, որ իրենց կաշխատակցեն նաև սովետահայ հետազոտողները: Վերջիններս, իրոք, հանդես են եկել «Հայկազյանի» երկրորդ գրքում, որի խմբագրականում կարդում ենք. «Հայկազյան հայագիտական հանդեսի» այս համարով կիրականանա մեր փափաքներեն մեկը: Հայրենի մշտավորականներու աշխատակցությամբ հանգրվան մը ևս կարձանագրվի հայագիտական մարդին մեջ ցարդ մեր ունեցած համագործակցության ճամբուն վրա»:

Հայ ժողովրդի հին ու միջնադարյան պատմության, գրամատչիտության, մշակույթի կարևոր հարցեր են քննարկված մի շարք շահեկան հոդվածներում:

Հայ դրամագիտության քիչ ուսումնասիրված բնագավառներից մեկին է նվիրված Ասպետ Տոնապետյանի «Արտաշեսյան հարստության վերջին գահակալներուն դրամները» հոդվածը. որով հեղինակն աշխատել է ուրվագծել Արտաշեսյան շրջանի դրամագիտությունը, ձեռքի տակ ունենալով, իր իսկ վկայությամբ, Արտաշեսյան դրամների՝ աշխարհում ամենամեծ հավաքածուն (հարյուրից ավելի դրամներ): Հոդվածում նկարագրվում է Արտաշեսյան հարստության տարբեր գահակալների (Տիգրան Ա, Տիգրան Բ, Տիգրան Գ, Տիգրան Դ, Երատո և այլն) վերաբերող 17 դրամ:

Պրոֆ. Աշոտ Պատմագրյանը հանդես է եկել հայ երաժշտական մշակույթի կարևոր հար-

ցերից մեկին նվիրված՝ «Մեր հոգևոր երգասացության սկզբնավորումը և զարգացումը» ուշագրավ հոդվածով: Նա նշում է, թե մինչ-մաշտոցյան հայ եկեղեցում երգում էին Բարդեժանի ու Եփրեմի երգերը, նրանց հետևողությամբ է, որ սկզբնավորվեց հայ հոգևոր երգասացությունը՝ թարգմանիչների օրով, նրանց նախաձեռնությամբ: Այդ շրջանում հոգևոր երգերը գրվում էին ազատ շափով, որովհետև 360 թ. կավոկեի տիեզերական ժողովը տաղաչափությունը համարելով հեթանոսական արվեստի արտահայտություն, 59-րդ հոդվածով արգելում է այն, պատճառաբանելով, թե մարդիկ շափտք է ոտանավորով խոսեն աստծու հետ, որ անբնական է:

Համառոտակի կանգ առնելով երրայական, ասորական և հունական ազդեցությունների խնդրի վրա, Ա. Պատմագրյանը խոստովանում է, որ դժվար է ստույգ գաղափար կազմել հին դարերի եկեղեցական երգերի եղանակների մասին, որովհետև «ժամանակի խաղաղությունը» որով նրանք որոշ դարերում գրանցվել են, տակավին չի վերծանված: Եսկայն նկատի ունենալով մեր եկեղեցու խիստ ավանդապաշտ և պահպանողական լինելը իր ավանդությունների նկատմամբ, կարելի է ասել որ գրեթե որևէ բան չի կարող փոխված լինել իրենց բուն եղանակից, որով երգել են «հեղինակները» (էջ 110):

Այս խոստովանությունից հետո արդյոք համարձակ չէ՞ այն պնդումը, թե հոգևոր երգի ազգայնացումը «կատարված էր մասամբ միայն՝ հայերենի թարգմանվելով երգի բանաստեղծությունը սիսյան, որովհետև որքան և հայերենը փոխարինեց ասորերենին և հունարենին, եկեղեցու երգասացությունը սակայն, շարունակեց մնալ հայության օտար՝ իր եղանակներով» (էջ 110): Եվ սա տևել է մինչև ներսես Շնորհալու հանդես գալը: Իսկ ո՞ր էին նրա նախորդները, մասնավորապես Գրիգոր Գողիկը կամ Գրիգոր Նարեկացին: Կարելի է այս տեսանկյունից ներսես Շնորհալու երաժշտությունը հակադրել, ասենք, «Հալիկ»-ին:

«Հին հուշարձաններու հատակագիծը Միջերկրականի շուրջ և Հայաստանի մեջ» ֆրանսերեն հոդվածում Փասկա Փապուճյանը նշում

է, որ հելլենիստական ու հոմեական ճարտարապետության մեջ, ինչպես և Միջերկրականի ավազանի երկրներում, միջնադարյան Արևմուտքում, նույնիսկ արաբական ճարտարապետության մեջ, օգտագործվել են հոմեացիների կիրառած՝ շրջանագծին ներգծած երկու հավասարակողմ եռանկյունին և հույների՝ շրջանագծին ներգծած քառակուսին:

Հեղինակը նկատում է, թե հայերը սերտ հարաբերության մեջ լինելով ժամանակի մշակութային կենտրոնների հետ, որդեգրել են նրանց մեթոդները և VII դարում կատարելագործելով՝ ստեղծել Բագավանի, Մաստարայի, Զվարթնոցի, Հոփսիմեի, Իրինգի, Հովվի եկեղեցիները՝ մեծ հմտությամբ ու ճաշակով օգտագործելով հիշյալ երկու տիպերը առանձին կամ համադրությամբ:

Երվանդ Քասունիի «Խաչակիրներ Անտիոքի դիմաց» հոդվածը, ինչպես ծանուցում է ենթավերնագիրը, ներկայացնում է «էջ մը հայխաչակրական հարաբերությանց պատմութենեն» և վերաբերում է 1097 թ. աշնանը, երբ Անտիոքում պաշարված խաչակիրներին սպառնում էին սովն ու համաձարակը: Հայերն ու ասորիները օգնում էին նրանց: Խաչակրության պատմության մի շարք ուսումնասիրողներ միակողմանիորեն են մեկնաբանում արշավանքների հետ կապված շատ հարցեր: Ե. Քասունին հանդես է գալիս նոր պարզաբանություններով: Որոշ հեղինակներ թյուրիմացության մեջ են ընկել, հավատալով միայն խաչակրաց ժամանակագիրներին, մինչդեռ խաչակրության պատմության համար պակաս արժեքավոր ու վրստահելի չեն նաև արևելյան, մասնավորապես հայկական աղբյուրները (տե՛ս, օրինակ, Մ. Զաբորովի «Խաչակրաց արշավանքների արևելյան ժամանակակիցների հաղորդումների նշանակության հարցի շուրջը» հոդվածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, N 3):

Լևոն Վարդանը «Խտրականությունը Օսմանյան կայսրության մեջ» հոդվածում հայկական և օտար (այդ թվում՝ յուրքական) աղբյուրների ու վավերագրերի ընձեռած փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տալիս, որ կայսրության ստեղծումից հետո գնալով ավելի ու ավելի է խորացել ազգային ու կրոնական խտրականությունը, այն բարձրացվել է օրենքի աստիճանի: Տարեգրքում տպագրված է նաև Արտաշես Տեր-Խաչատուրյանի «Հայկական երկու պատվիրակությունները (1918—1919)» հոդվածը:

«Հայկազյան հայագիտական հանդեսը» մեծ տեղ է հատկացնում նաև հայ նոր ու նորագույն գրականության հարցերին: Տպագրված են Վահե Օշականի «Արմենակ Հայկունի—ա-

րևմտահայ առաջին նախառոմանթիքներեն», Պարույր Աղապաշյանի «Հնաբանությունները Մուրացանի պատմագեղարվեստական երկերուն մեջ», Օննիկ Սարգիսյանի «Մերձավոր արևելքի հայ գեղարվեստական արձակը» և Գրիգոր Շահինյանի «Սովետահայ ժամանակակից վեպը» և Զ. Խալաիյան» հոդվածները:

«Հանդեսում» գրախոսված է ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի աշխատակիցներ Ս. Զուլջյանի և Լ. Սարգսյանի կազմած արաբերեն-հայերեն բառարանը, որ հրատարակվել է Բեյրութում, 1969 թ.: Համառոտ տեսությամբ ներկայացված են «Հին ժողովուրդներ և վայրեր» մատենաշարի 68-րդ հատորը՝ Սիրարփի Տեր-Ներսիսյանի «Հայերը» անգլերեն աշխատությունը (1969), «Հուլամատյան ծեպելլի ամերիկյան որբանոցի 1920—1925» (Պեյրութ, 1969), Արտ. Տեր-Խաչատուրյանի «Շահան Պերպերյան (1891—1956)» (Պեյրութ, 1969) գրքերը: Նյութեր են տպագրված կրթական-մշակութային գործիչ, Հայկազյան կոլեջի հայագիտական ամբիոնի առաջին վարիչ Տիգրան Խրոբյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ:

«Հայկազյան հայագիտական հանդեսի» երկրորդ գիրքը նույնպես ընդգրկման լայն շրջանակներ ունի: Լևոն Վարդանի «Հայկական Տասնհինգը և թուրք-ղերմանական դաշնագիրը», Զավեն Մսրրլյանի «Արևմտահայ բռնագրաված հողերու հարցը» ուսումնասիրությունները տարբեր տեսանկյուններից քննարկում են «Հայկական հարցի» հետ կապված միջազգային-իրավական խնդիրներ սոցիալ-քաղաքական բնույթի հարցադրումներով, շրջանառության մեջ են դնում նոր նյութեր: Վարդգես Համազասպյանն իր հոդվածում համառոտակի բրնութագրում է հայ գաղթավայրերի առաջացման պատմությունը, իսկ Պարգև Տարագճյանը ուսումնասիրության առարկա է դարձրել հայ ավետարանական եկեղեցու վարդապետությունը: Պեպո Սիմոնյանը փորձել է վերլուծել ու գնահատել Սովետական Հայաստանի երիտասարդական բանաստեղծությունը:

Ասպետ Տոնապետյանի նոր հոդվածը վերաբերում է Արտաշեսյաններին: Ելնելով իր հավաքածուի 4 գրամանոց մի պղնձե դրամի շորս ընթեռնելի տառերիս (ԱՅՇԱ), դրամագետն այն վերագրում է Արտաշեսյան հարուստության հիմնադիր Արտաշես Ա-ին, հնարավոր համարելով նաև, որ դրամը պատկանել է Արտաշես Բ-ին: Հասկանալի է, որ հարցը կարող է նոր փաստերի:

Արարական մատենագրության մեջ մի շարք դրույցներ կան (հայերի ծագման, Արալի ու Շամիրամի, Կարնո քաղաքի, Սասնա

ծոերի մասին), որոնց մեջ հայկական նյութի վրա ավելացված է արաբականը, տալով նոր տարբերակ: Դրանք իբրև հայ-արաբական մատենագրական առնչությունների հետաքրքրական նմուշներ, գրավել են սովետահայ պատմաբան Արամ Տեր-Ղևոնդյանի ուշադրությունը: Նա անդրադարձել է Մասիս լեռան մասին X դարից ավանդված զրույցին:

Ինորգ Խրլոբյանը «Չարիքի եզնիկյան վերլուծությունը» հոդվածում ընդգծելով շարիքի հարցի հրատապությունը V դարի Հայաստանում, նկատում է, թե Կողբացու ավերուծության բովանդակությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ կրթոտորեն քննադատելով հայկական քրիստոնեական գաղափարախոսության հակառակորդներին, նա միաժամանակ ձգտում էր մշակել մի այնպիսի ուսմունք, որը նպաստեր նաև ազատագրական շարժմանը: Ուստի «ներա ուսմունքը յուրատեսակ համադրումն է պայքարի գաղափարախոսության և ենթարկվածություն քարոզող վաղ միջնադարյան աստվածաբանության» (էջ 161):

Բնական է, որ Եզնիկ Կողբացու քննարկումը աստվածաբանական բնույթ ունի, «սակայն նա հաճախ դուրս է գալիս այդ շրջաններից և զբաղվում իմաստասիրական և սոցիալ-հոգեբանական վերլուծությամբ»: Գ. Խրլոբյանը նկատում է. շարիքի «եզնիկյան վերլուծությունը զգալիորեն դուրս է գալիս բարոյախոսական ընդհանուր ու վերացական մրտածելակերպի սահմաններից: Վաղ միջնադարյան կրոնա-դոգմատիկ վարդապետության կեղևի մեջ Եզնիկը ձգտում է մշակել մի այնպիսի փիլիսոփայական աշխատություն, որը միաժամանակ համապատասխանելով ազատագրական պայքարի պահանջներին, լինելու հիմնավորված, տրամաբանական ու մարտնչիչ» (էջ 169):

Նույն հատորում զետեղված է Տիգրան Գուլյումճյանի «Պատմական և ցեղագրական ակնարկ մը՝ Ժ—ԺԿ դդ. Կովկասի, Արևելյան Անատոլիի և Ատրպեյճանի» անգլերեն հոդվածը, ուր ուսումնասիրված է նշված շրջաններում բնակվող ժողովուրդների պատմական ճակատագիրը XI դ. սելջուկ-թուրքական և XIII դ.՝ մոնղոլական արշավանքների շրջանում: Հոդվածում քննարկվում են նաև մի շարք դրամագիտական ու սոցիալ-հասարակական խնդիրներ: Պիտի նկատել, որ հեղինակը անտեսել է հայկական աղբյուրների տվյալները:

Երվանդ Քասունին տպագրել է «ԺԱ գարու Անտիոքի կառավարիչներ Պեխտ-Խաչատուր և Վասակ Պահլավունի» հոդվածը, որ «ԺԱ դարու հայկական փոքր թագավորություններ և

իշխաններ» անտիպ աշխատության մի հատվածն է: Հիմնավորելով 1065 թ. Անտիոքի դուքս, վերահիշյալ Պեխտի և 1068 թ. Անտիոքի կառավարիչ նշանակված Խաչատուրի նույն անձնավորությունը լինելու վարկածը, հեղինակը բնութագրում է հայազգի իշխանի գործունեությունը, որ ընդհատվում է Բյուզանդիոնի հակահայկական քաղաքականության հետևանքով: Բյուզանդիոնը «նպատակադրված էր հրապարակեն վերցնել բոլոր աչքառու այն հայերը, որոնք կրնային, հատկապես կայսրության արևելյան սահմաններուն մեջ, հայկական ինքնուրույն դիրքորոշում ստեղծել: — գրում է Ե. Քասունին (էջ 131):

Խաչատուրից հետո Անտիոքի իշխան է նըշանակվում Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավունին, որի սպանության փաստի մեջ ևս հեղինակը տեսնում է նույն հետևողական քաղաքականությունը: Այդ փաստից ելնելով Քասունին ենթադրում է, թե «Վասակ Պահլավունի դադարած էր Բյուզանդիոնի հլու կամակատարը ըլլալե» (էջ 133—134):

Հակոբ Օշականի «Արևելահայ մատենագրություն» աշխատությունից հրապարակված է երկու ուրվագիծ՝ «Խաչատուր Աբովյան» և «Գաբրիել Սունդուկյանց»: Տպագրված է նաև Վահե Օշականի «Արևմտահայ պատմվածքի ծագումը» հոդվածը: Լևոն Բաշալյանի բառապաշարի ուսումնասիրությամբ հանդես է եկել Պարույր Աղապաշյանը:

Արտաշես Տեր-Խաչատուրյանը ստորագրել է «Լիբանանահայ մամուլի հիսուն տարին. 1921—1971 թթ.» հոդվածը: Հակիրճ մատենագիտական ակնարկ է դա. ուր բնութագրվում է Լիբանանի հայ մամուլի կեսդարյա ուղին՝ հիմնական շրջափուլերով, խոսվում է կարևորագույն պարբերականների, նրանց արժանիքների ու թերությունների մասին: Հոդվածին կցված է մամուլի ցուցակը, որ բաղկացած է ավելի քան 170 պարբերականների անունից:

«Հայագիտական հրատարակություններ» խորագրի տակ զետեղված է Օննիկ Սարգիսյանի գրախոսությունը Պարույր Սևակի «Սայաթ-Նովա» աշխատության մասին: Չարլզ Բարնիի և Դեվիդ Մարշալ Լենգի «Բլուրներ ժողովուրդները» (Լոնդոն, 1971, անգլերեն), «Հարթ» հրատարակչության լույս ընծայած «Հայկական մամուլի ցուցակ» (Երկրորդ հրատ., Լոնդոն, 1971, անգլերեն), Լևոն Վարդանի «Հայկական Տասնհինգը և հայերու լքյալ գույքերը» (Պեյրոթ, 1970), Դեվիդ Մարշալ Լենգի «Հայաստան՝ քաղաքակրթության օրրանը» (Լոնդոն, 1970, անգլերեն) գրքերի վերաբերյալ տրված են համառոտ բնութագրեր:

Տարեգրքում տպագրված են նաև մահա-

խոսականներ Պարույր Սևակի, Միրայել Մազմանյանի, Բանասեր-պատմարան Մեսրոպ Եպ. Քերզյանի, Բենիամին Քաշյանի, պատմարան Հովհաննես Թորոսյանի մասին:

«Հայկազյան հայագիտական հանդեսը» սփյուռքի մշակութային կյանքում աչքի ընկնող երևույթ է, որ իրագործվում է մի խումր

մտավորականների նախաձեռնությամբ: Տարեգիրքը կարևոր դեր է կատարելու արտաշխարհը հայրենիքի հետ կապելու և հայագիտության զարգացման գործում: Առաջին երկու զրբերը դրա առհավատյան են:

Ա. ՄԱԴՈՅԱՆ

D. M. LANG. Armenia Cradle of Civilization. London, 1970. Д. М. Лэнг. Армения — колыбель цивилизации. Лондон, 1970.

В 1970 г. в Лондоне вышла в свет книга английского кавказоведа, профессора Лондонского университета Дэвида Маршалла Лэнга «Армения — колыбель цивилизации».

Данная книга — результат многолетних кропотливых трудов.

Широкие знания, добросовестная работа дали возможность Лэнгу написать работу, в которой доступно и с большой теплотой изложены события и явления, составляющие гордость исторического прошлого армянского народа и показывающие то место, которое занимает Армения в истории мировой цивилизации. Непредвзятость суждений дают возможность автору показать возрождение Советской Армении после векового гнета и репрессий, ее новую жизнь и новую культуру.

Профессор Лэнг дважды, в 1966 и 1968 годах, посетил Советскую Армению и еще ближе познакомился с ее народом.

В первой главе своей работы профессор Лэнг описывает естественные и климатические условия страны.

Отметив центральное местоположение Армении в древнем мире, проф. Лэнг разделяет мнение тех археологов, которые считают, что ранние миграции народов каменного века в Европу начинались либо из Армении, либо из близлежащих районов. В раннем же бронзовом веке Армения стала конечным пунктом для мигрировавших индоевропейских племен.

Занимая стратегически важное положение в древние времена, Армения подвергалась неоднократным вторжениям. Если в глубокой древности номады евразийских степей в своем движении на юг неминуемо должны были вторгаться в пределы Армянского нагорья, то впоследствии Армения должна была стать ареной кровопролитных столкновений соперничавших между собой ми-

ровых держав Запада и Востока. В таких условиях, чтобы выжить, армяне должны были проявить выдержку, твердость характера и стойкость. Поэтому, заключает автор, многие соседние в древности с Арменией народы исчезли бесследно, в то время как армяне продолжают существовать и творить. «Только армяне, как и соседние с ними грузины, приобрели такое национальное и культурное единство, которое дало им возможность выдержать чужеземное господство в течение столетий. Основанное на общности языка, цивилизации и религиозных верований, это единство, поддерживаемое необычной твердостью воли и храбростью, способствовало выживанию народа, которого преследовали с целью полного искоренения с лица земли» (стр. 39).

Вторая и третья главы монографии проф. Лэнга знакомят читателя с археологическими находками, дающими возможность ввести Армению в тот комплекс стран, в котором протекала ранняя человеческая деятельность, начиная от Южной Англии, через Сахару и Египет, до Северо-Восточного Китая. Исходя из трудов советских археологов, проф. Лэнг заключает, что Армянское нагорье обитаемо минимум полмиллиона лет. «Следовательно, Армения занимает свое место как один из наиболее древних очагов человеческой культуры, как звено в продолжающейся цепи культур палеолита Южной Азии, Средиземноморья, Центральной Европы и Африки» (стр. 57). Проф. Лэнг подчеркивает, что значение Армении заключается также и в том, что она является страной раннего земледелия. Множество зерновых, найденных при раскопках, свидетельствуют об этом. Помимо того, Армения и Грузия являются родиной многих современных зерновых. Многие археологические находки, сделанные как в